

ՔԱՐԱՔԱՐԹՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

ԳԷՈՐԳ ՂԱՐՍԶԵԱՆԻ

(Շարունակութիւն և գերջ՝ 1)

Բարբարոսութեան վիճակի շրջանից մարդս ի՞նչպէս անցաւ քաղաքակրթութեան շրջանը, որն է այդ անցողական շրջանում մարդկային կեանքի ընդհանուր պատկերը—առա դորա մասին կլինի այժմ խօսքս:

Տոհմային կազմակերպութեան զարգացման ամենաբարձր աստիճանի վրայ, ինչպէս այդ տեսնում ենք կարմրամորթների մէջ, այդ կազմը ներկայացնում է հետևեալ ձևը:

Յեզր բաժանւել է արդէն մի քանի տոհմերի. ազգաբնակութեան անելով այդ նախնական տոհմերը մաս-մաս են եղել, մանր երկրորդական տոհմերի են բաժանւել. սրանց վերաբերմամբ սկզբնական տոհմը ներկայացնում է ֆրատրիա. ինքը ցեղն էլ բաժանում է մի քանի ճիւղերի, որոնց մեծ մասը հին տոհմերն են. ազգակից ցեղերը երբեմն միութեան դաշն են կապում: Այս պարզ կազմակերպութիւնը բալորովին բաւականութիւն է տալիս հասարակական այն կարգերին, որոնցից նա առաջ է եկել: Նա է միայն համապատասխան այդ կարգերին, սրանց բնական արտայառութիւնն է նա: Ներքին ընդհարումներ այստեղ չեն լինում ինչպէս այդ լինում է զարգացած ու կազմակերպւած հասարակութիւնների մէջ: Պատե-

բազմը որոշում է արտաքին յարաբերութիւնները. պատերազմը կարող է առաջ բերել ցեղի չնշումն, բայց ոչ հարստահարութիւնն Բացակայում է այս հասարակութեան մէջ իրաւոնքի և պարուժի տարբերութեան գաղափարը: Ազգաբնակութիւնը նօսր է... Աշխատանքի բաժանումը բնական պայմաններից է առաջ եկել. նա գոյութիւն ունի միայն սեռերի մէջ: Տղամարդը պատերազմում է, որսի է գնում, ձուկն է որտում, հում կերակուր է ճարում և դրա համար անհրաժեշտ գործիքներն ել ինքն է ձեռք բերում: Կինը հոգ է տանում տան վրայ և ուտելիք ու հագնելիք պատրաստելու վրայ, գործում է, կարում է և այլն: Ամուսիններից ամեն մէկը աէք է իր մասում: տղամարդը անտառում, կինը տանը: Ամեն մէկը նրանցից սեփականատէր է համարւում իր ձեռքով պատրաստած և գործածող գործիքների: տղամարդը ուրեմն զէնքերի, որտրդութեան և ձկնորսութեան գործիքների սեփականատէր է, կինը՝ տան կահկարասիքի: Մի քանի, երբեմն շատ թշով, ընտանիքներ անալին տնտեսութիւնը առաջ են տանում հասարակաց, ընդհանրական սկզբունքով. ինչ որ շինուում է, պատրաստում և գործ է ածոււմ ամենքի ձեռքով միասին, այն բանը դառնում է ընդհանուրի սեփականութիւն, ինչպէս տունը, ազգին, հողը և այլն:

Բայց մարդիկ ամեն տեղ կանգ չառան այս աստիճանի վրայ Աւելի առաջադէմ ցեղերից մի քանիսը, ինչպէս արիացիք, սեմիտացիք, թերեւսնակ թուրանացիք, անասուններին ընտանեացնելու, ինչպէս ցետոց անասուններին պահպանելու, ինսամելու գործը իրանց աշխատանքի արտօնեալ մասնաւոր ձիւղը դարձրին: Հովւական ցեղերը բաժանեցան բարբարոս միւս ցեղերից. սա եղաւ աշխատանքի առաջին հասարակական բաժանումը: Հովւական ցեղերը ոչ թէ միայն սկսեցին աւելի արտադրել քան միւս բարբարոսները, այլ արտադրեցին նոյնպէս կեանքի ուրիշ միջոցներ: Այս հանդամանքը առաջինը զարկ տւեց կանոնաւոր փոխանակութեան առաջ գալուն: Առաջ փոխանակութիւնը տեղի է ունենում միայն ցեղերի մէջ իւրաքանչիւր ցեղապետի միջոցով. բայց երբ խաշինները հետզհետէ անցան մասնաւոր սեփականատօնէրերի ձեռքը, այնուհետեւ փոխանակութիւնը սկսեց տեղի ունենալ ջոկջոկ անձնաւորութիւնների մէջ և ընդունեց փոխանակութեան

առանձնական ձեւը։ Անասունը սկսեց գործադրւել իրրեւ դրամ և արդէն իրրեւ դրամ էր ծառալում այս աստիճանի վրայ։ Ապրանքների փոխանակութեան հէնց սկզբից այլպիսի կարևորութիւն է ստանում ապրանքադրամը և արագ կերպով զարգացաւ ապրանքադրամի պահանջը։ Մշակելի հողը մնաց ցեղի սեփականութիւն։ այդ հողը տրուում էր նախ տոհմին օգտւելու։ ցետոյ տոհմն էլ իր կողմից փոխանցում էր մասնաւոր անհատներին օգտւելու, որոնց հնարաւոր էր լինում ձեռք բերել այդ հողին տրւելիք մի քանի և ոչ բացարձակ իրաւունքներ։ Այս շրջանում տեխնիկական արհեստագիտութեան մէջ երկու նշանաւոր գիւտեր են կատարւում։ գործադրութեան մէջ է մտնում, առաջինը՝ գործելու մեքենան, երկրորդը մետաղահանքերի հալոցը և մետաղների մշակութիւնը։

Արդիւնագործութեան արագ զարգացումը, որ տեղի է ունենում ամեն ճիւղերում անասնապահութեան, երկրագործութեան, տնային արհեստների մէջ, միջոց տեղ մարդու բանւորական ոյժին աւելի արտադրել քան հարկաւոր էր այդ ոյժը պահպանելու համար։ Այդ հանգամանքը նոյն իսկ մեծացրեց միւնոյն ժամանակ տոհմի համայնքի կամ առանձին ընտանիքի բաժինն ընկնող օրական աշխատանքի քանակութիւնը։ Առաջ եկաւ այդ բանից հասարակութեան մէջ բանւորական նոր ձեռքերի պահանջ։ Պատերազմը միայն կարող էր հեշտութեամբ լրացնել այդ պահանջը, պատերազմի մէջ գերի առաջներին սկսում են աշխատեցնել իրրեւ ստրուկների. զերիները ստրուկների շարքն են անցնում։ Հարստութեան և արդիւնագործութեան ծաւալը ընդլայնելու հետ միասին՝ աշխատանքի առաջին մեծ բաժանումը առաջ բերեց նաև ստըրկութիւն։ Ստրկութիւնը պատմական տւած ուայմանների անհրաժեշտ բնական արտաքայլութիւնն էր։ Աշխատանքի առաջին մեծ բաժանումից առաջ եկաւ հասարակութեան առաջին մեծ բաժանումը երկու դասակարգերի—տէրերի և ստրուկների, հարստահարողների և հարստահարւածների։

Հօտերի մասնաւոր սեփականութիւնն դարձնելու հանգամանքի մէջ ցեղափոխութիւն եղաւ, այսինքն՝ հաստատուում է տղամարդու միահեծան իշխանութիւնը, միահեծան իշխանութիւնն վաւերացրած մայրական իրաւունքի անկումով և թէ զուգական ամուսնութեան

տեղի տալովը միամուսնականութեան (այսինքն մի կին և մի տղամարդ ունենալու օրէնքին): Բայց սրա հետ միասին տեղի ունեցաւ քաջքայումն հնաւանդ տոհմային կազմակերպութեան, առանձին ընտանիքը ոյժ գարձաւ և սպառնական դիրք ընդունեց տոհմի առաջ:

Այնուհետև մենք մտնում ենք բոլոր կուլառուրական ժողովուրդների հերոսական շրջանը, երկաթի գործածութեան և սրան հետեւող՝ տեխնիկայի բոլոր մասերում նշանաւոր յառաջադիմութիւնների շրջանը: Հարստութիւնը արագութեամբ սկսեց աճել, բայց իրեւ մասնաւոր հարստութիւն առանձին-առանձին անհատների ձեռքում:

Այսպիսի բազմատեսակ գործունէութիւնը արդէն այլ ևս չէր կարող կատարւած լինել միևնուն մարդու ձեռքով, տեղի ունեցաւ աշխատանքի երկրորդ մեծ բաժանումն—արհեստը զատւեց երկրագործութիւնից: Արդիւնադրծութեան աստիճանաբար աճումը, և գրա հետ միասին նաև աշխատանքի արդիւնաւորութիւնը, մեծացրեց մարդկային բանւորական ոյժի արժէքը: Ստրկութիւնը որ սկզբում, նախընթաց աստիճանում, իրեւ նորութիւն տեղուղ միացն աչքի էր ընկնում, այժմ դառնում է ամենուրեք յարաւեռութեան պահանջ. ստրուկները սկզբում գրեթէ օգնականներ էին աշխատանքի մէջ. իսկ այժմ նրանց ահագին թւով քշում են դէպի աշխատանքի դաշտը և դէպի արհեստանոց: Սկիզբն է առնում արդիւնաբերութիւնը ուղղակի փոխանակութեան համար—այն է ապրանքների արդիւնաբերութիւնը. սրա հետ ծննում է և վաճառականութիւնը ոչ թէ միայն ցեղի մէջ և նրա սահմաններում, այլ և նա տարածում է հեռաւոր երկիրներ: Բայց այս բոլորը գեռ շատ անգարգացած վիճակի մէջ է... Մարդկանց հարուստ և աղքատ վիճակի տարբերութիւնը առաջ է գալիս արդէն դոյսութիւն ունեցող ազատ մարդկանց և ստրուկների տարբերութեան հետ միասին—ուրեմն աշխատանքի բաժանման հետ տեղի է ունենում հատարակութեան նոր դասակարգային բաժանումն: Ընտանիքների առանձին ներկայացուցիչների ուներութեան տարբերութիւնը ոչնչացնում է այն ամեն տեղերում կոմմունիստական համայնքները, ուր մինչև այժմ պահպանել էին իրանց գոյութիւնը. բացի այդ, ուներութեան տարբերու-

թիւնը վերացնում է նոյնպէս նոյնատեսակ համայնքների օգտին կատարւող հողի հասարակաց (coléctive) մշակութիւնը Մշակւած հողը տրւում է օգտւելու առանձին ընտանիքներին, սկզբում ժամանակաւորապէս, յետոյ ընդմիշտ. հողի վերջնականապէս մասնաւոր սեփականութիւն դաւնալը կատարւում է ասուիճանարար և զուգընթացարար, երբ զուգական ամուսնականութիւն, միամուսնականութեան է փոխւում։ Առանձին ընտանիքը դառնում է հասարակութեանանուեսական միութիւն։

Հետզհետէ ազգաբնակութեան բազման սլու հանգամանքը սովում է մարդոց աւելի սերս կապւել ներքուսո և համախմբւել հասարակութիւնը պաշպանելու համար։ Ազգակից ցեղերի դաշնակցութիւնը անհրաժեշտութիւն է դառնում։ շուտով նրանք ձուլւում են միասին և դրա հետ միաժամանակ տեղի է ունենում նաև առանձին ցեղապատկան տէրրիտորիաների (հողերի) միացումը ի մի ընդհանուր ազգային տէրրիտորիայի։ Ազգային գորքի առաջնորդի պաշտօնը դառնում է անհրաժեշտ, մշտական պաշտօն ժողովրդական ժողովը սկիզբն է առնում այնտեղ, ուր դեռ մինչև այդ ժամանակ գոյութիւն ունեցած չէր։ Ցեղապետը, խորհուրդը, ժողովրդական ժողովը արդէն հասարակութեան օրգաններ են կազմում, հասարակութեան, որը անցաւ տոհմային կազմակերպութիւնից և կերպարանափոխւեց պատերազմական դէմօկրատիայի (ռամկապետութիւն)։ Պատերազմական ենք ասում, որովհետև պատերազմը և զինւորական կազմակերպութիւնը դարձան ժողովրդական կեանքի կանոնաւոր ֆունկցիաներ... Պատերազմ... նա մղում է այնուհետև պարզ կողովսելու նպատակով, դառնում է մշտական պարապմոնք կենսական միջոցները հայթայինելու համար։ Նոյն բանը տեղի է ունենում նաև հասարակութեան ներքին կեանքում։ Կողովսելու համար մղած պատերազմը մեծացնում է գլխաւոր զօրապետի, ինչպէս նաև նորա մերձաւոր օգնականների, նիւթական կարողութիւնը։ միևնոյն ընտանիքներից յաջորդների աւանդական ընտրութիւնը ասուիճանարար տեղի է տալիս ժառանգականութեան սկզբունքի գործադրութեան, մանաւանդ հայրական գծով ժառանգականութեան կարգը հաստատւելուց յետոյ։ Ազգբում այդ ժառանգական յաջորդութիւնը թույլ է գործադրում, իսկ յետոյ առաջ է բերւում իրեւ

պահանջ, վերջապէս ձեռք է բերւում ուժով. ակիզըն է դրւում գահակալական յաջորդութեան և ժառանգական աղնւականութեան։ Այսպէս ուրեմն տոհմային կազմակերպութեան բոլոր օրգանները աստիճանաբար արմատախիլ են լինում ժողովրդական կեանքից... և ողջ տոհմային կազմը ուղղակի փոխում է հակադիր կազմակերպութեան։—այսինքն ցեղերը, իրանց ներքին սեփական գործերն ազատ կարգադրելու հանգամանքից—անցնում են բնականաբար զրացիներին ճնշելու և կողոպտելու կազմակերպութեան և սրա հետ զուղընթացաբար ժողովրդական կամքի օրգանները և գործիքներն ևս անցան. տիրապետող իշխանութեան ձեռքը, որոնք(օրդանները) այնուհետև իրեւ իշխանութեան ոյժ գործադրւում են սեփական տոհմի վրայ բռնանալու և թէ նրան ճնշելու։

Ահա այսպիսի հասարակական քաղաքական հանգամանքներից սկիզբն է առնում քաղաքակրթութեան շրջանը։

Քաղաքակրթութիւնը կազդուրում է և ամրացնում արդէն գոյութիւն ունեցող աշխատանքի բաժանման բոլոր ձեռքը, մանաւանդ սաստիացներով քաղաքի և դիւղի մէջ հակադրութիւնը։ Բացի սրանից քաղաքակրթութեան շրջանը ստեղծում է իրան յատուկ աշխատանքի մի ձև՝ բոլորովին համապատասխան գոյութիւն ունեցող աշխատանքի բաժանման, այն է հասարակական մի դասակարգ, որը չէ արդիւնաբերում արդէն, այլ միայն պարապւում է պրոդուկտների, բերքերի փոխանակութուամբ։ այդ դասակարգը, հասկանալի է, վաճականների դասակարգն է։

Առեւրական դասակարգը արագ ձեռք է բերում ահազին հարստութիւններ և քաղաքակրթական շրջանի ընթացքում հետզհետէ աւելի և աւելի մեծ դիրք է սկսում բռնել և տիրապետել արդիւնաբերութեանը։

Քաղաքակրթական շղջանի ակիզբներում նորաբողբոջ առեւրական դասակարգը ի հարկե ոչինչ չգիտէր, որ իրան մեծ ապագայ էր սպասում։ Նա կազմեց և անհրաժեշտ դասակարգ ճանաչւեց. այդ հերիք էր։ Այդ դասակարգի հետ միասին առաջ է գալիս նոյնպէս մետաղեայ դրամը, որը մի նոր միջոց է դասակարգ զօրեղացնելու իւր իշխանութիւնը արդիւնաբերութեան և արտադրող դասակարգի վերաբերմամբ։ Ու մի ժամանակ դրամը իւր ոյժով այնպիսի

նախնական-կոպիտ և բռնի ձեւերով չէ հանդէս գալիս, ինչպէս իւր սկզբնաւորութեան ժամանակ: Փողով ապրանքների վաճառումը առաջ բերեց դրամական տոկոս և վաշխառութիւն: Եւ ոչ մի նորագոյն օրէնսդրութիւն այնպէս անխնայ և անպաշտպան կերպով չգցեց պարտապանին պարտատիրոջ օտները, ինչպէս Աթէնքի և Հռովմի օրէնքները:

Հողը այժմ, դառնալով մասնաւոր սեփականութիւն, դարձաւ միանգամայն լուծելի, վաճառելի (aliénable) բան: Հողի սեփականատէրը, ազատւելով իշխանութիւնից, տոհմից և ցեղից, կտրեց նոյնպէս իւր կապը հողից: Առաջ եկաւ իպօտէք (գրաւատութիւն) և հողազրկութիւն: Այսպէս ուրեմն քանի ընդարձակեց վաճառականութիւնը, փողով և դրամական վաշխառութեամբ, հողային մասնաւոր սեփականութեամբ և գրաւականով—իպօտէկայով—արագութեամբ էլ տեղի ունեցաւ հարստութիւնների կենդրոնացումն: Հարստութիւնները դիզում են փոքրաթիւ մարդկանց ձեռքերում, իսկ դրա հետ զուգընթացաբար աճում է մասսայի աղքատութիւնը և աղքատ դասակարգը ստուարանում է:

Տոհմային կազմակերպութեան ձեւերը, որոնք յինւում էին հասարակական կեանքի այժմ անհետացող պայմանների վրայ, այլ ևս պէտքական չէին նոր հասարակութեան համար: Այս նոր զարդացող հասարակութիւնը այնպիսի տնտեսական պայմաններ ունի, որոնք բաժանում են հասարակութիւնը ազատների և ստրուկների, հարստահարող հարուստների և հարստահարւած աղքատների: Մենք տեսնում ենք ուրեմն հասարակութեան մէջ հակադրութիւններ, որոնց չէր կակելի հաշտեցնել, այլ ընդհակառակը՝ տնտեսական պայմանները սուր կերպարանք են տալիս այդ դասակարգերի զարդացման: Տեղի են ունենում յարատև ընդհարումներ դասակարգերի մէջ—ինչպէս այդ ցոյց է տալիս քաղաքակրթական պատմութիւնը. անհրաժեշտ եղաւ մի երրորդ ոյժի միջամտութիւնը՝ արգելելու համար ներքին դասակարգային ընդհարումները, որը սական թոյլ էր տալիս դասակարգերին յամենացն դէպս մրցելու, կախւ մղելու տնտեսական հողի վրայ և այն էլ օրինական ճանապարհով: Տոհմային կազմակերպութիւնը հնացաւ. աշխատանքի բաժանումը նրան ջախջախեց և առաջ բերեց դասակարգեր. անհրաժեշտ եղաւ պետութիւն, որը փոխարինեց տոհմային ձեռով կառավարելու եղանակը:

Ալթէնքում պետութիւնը առաջ եկաւ ուղղակի դասակարգերի հակադրութեան հանդամանքից, դասակարգեր որ զարգացան նոյն խոկ տոհմային կազմակերպութեան մէջ։ Հռովմում պետութիւնը հազարակեցնում է տոհմային արիստօկրատիային։ Պետութիւնը մի պահանջ է դառնում ժողովրդի ապագայ զարգացման համար. նա է հասարակութեան որոշեալ աստիճանի զարգացման արդիւքը, նա է խոստովանութիւն, որ հասարակութիւնը իրան մէջ ամփոփում է այնպիսի բարդ ստայմաններ, որոնք առաջ են բերում պետութեան գոյութեան անհրաժեշտ պահանջ։ Պետութեան բնորոշ կէտերը, որոնցով նա տարբերում է տոհմային կազմակերպութիւնից, հետեւեալներն են. հողի բաժանումն հպատակների մէջ, պետական ստիպողական ոչի հաստատութիւնը, հարկերի և այնուհետև պետական պարտքի սահմանումն։ Պետական ծառայութիւնը (Հինովանիկութիւն), իբրև հասարակութեան օրգան, ծանրանում է հասարակութեան վրայ։

Վերևը նկատեցինք, որ հասարակութեան զարգացումը, այսինքն որոշ խօսելով—նրա դասակարգերի բաժաննելու հանդամանքը առաջ բերեց պետութեան գոյութեան կարիք, պահանջ, և բանի որ գոյութիւն կունենան մի հասարակութեան մէջ դասակարգեր և թէ մարդկութիւնը բաժանած կը լինի ազգերի և ցեղերի, նոյնքան էլ տեսզական կը լինի պետութիւնը և նրա բարձր պատմական նշանակութիւնը կը պահպանէի։

Ներկայումս եւրոպական հասարակութեան մէջ տեղի է ունենում մեր աչքի առաջ ընդհարում կապիտալի և աշխատանքի մէջ. եւրոպական պետութիւնը այնպէս, ինչպէս մենք տեսնում ենք, ձգտում է մեղմացնել այդ ընդհարումը և ինքն իրան կոչւած է զգում հաշտեցնել հասարակութեան մէջ գոյութիւն ունեցող հակասական տարրերը (այդ հաշտեցնող գործում յայտնի դեր է խաղացել դարուս նշանաւոր քաղաքական գործիչներից մէկը—երկաթի կանցլէր Բիսմարկ)։ Կը յաջողւի արդեօք եւրոպական պետութեանը հաշտեցնել կապիտալի և աշխատանքի մէջ ներկայումս տեղի ունեցող այդ ընդհարումը և թէ ինչ հետեւանք կունենայ հակառակ դէպքում. սրանք բարդ հարցեր են, որոնց մասին տեղը չէ այստեղ խօսելու։ Այժմ մնում է ինձ ներկայացնել միայն մարդ-

կային կառավարութեան ներկայ պատկերը, համառօտակի որոշել ներկայ քաղաքակրթութեան բնաւորութիւնը:

Ամբողջ երկրագնդի վրայ հաշւում են մօտաւորապէս 1450 միլիոն մարդ. այս թւից 330 միլիոնը գալիս է Եւրոպային, 800 միլիոն Ասիային, 200-ը Աֆրիկային, 100-ը Ամերիկային: Մարդկութիւնը բաղկացած է բազմաթիւ տարրեր ցեղերից և ազգերից: Բայց շատ վայրենի ցեղեր արդէն հանգչելու, մեռնելու վրայ են, ինչպէս Թասմանիայի բնիկները, կամ թէ ձուլում են աւելի ուժեղ ցեղերի մէջ, ինչպէս Ամերիկայի հնդիկները. Մնում են ներկայումս միայն երեք մեծ ցեղեր: Սպիտակ ցեղ, որին պատկանում են Ասիայի կէս մասը, Եւրոպան, Ամերիկան, Աւստրալիան և Աֆրիկայի եղերը: Դեղին ցեղ—ապրում է Ասիայի արևելքան մասում (չինացիք, մոնղոլական ցեղերը և այլն): Նեգրները (սևամերթները) բնակում են Աֆրիկայում և Ամերիկայի այլեցեալ գառու երկիրներում, ուր վերջին դարերում Եւրոպացիք տեղափոխում էին Աֆրիկայից իրեւ ստրուկներ բանացնելու: Ինչպէս բազմաթիւ են ցեղերը երկրագնդիս երեսին, այնպէս էլ շատ և շատ են կրօնները և ազանդները. բայց այդ բազմաթիւ աննշան կրօնները վացրենի ցեղերի մէջ անյայտանում են և տեղի են տալիս բարձր, զարգացած կրօններին:

Սպիտակ ցեղին է պատկանում քաղաքակրթութիւնը այնպէս, ինչպէս մենք այժմ տեսնում ենք: Ներկայումս Եւրոպայի երեք ազգերի վրայ կարելի է մատնանիշ անել, որոնք բարձր լինելով միւսներից՝ իրանց գործունէութեամբ առաջ են տանում քաղաքակրթութեան գործը. այդ երեք ազգերն են անգլիացիք, ֆրանսիացիք, գերմանացիք:

Ճշմարիտ է ֆրանսիական և գերմանական ազգերը անգլիացիների և ռուսների նման չեն տիրում երկիրների մեծ տարածութեան, բայց և այնպէս նրանց քաղաքակրթական գերը անգլիացիների հետ հաւասար նշանակութիւն ունի մարդկութեան համար: Ռուսները, սլավ ցեղի ներկայացուցիչները, բռնած ունին բացի Եւրոպայի արևելքան մեծ մասը, նաև Ասիայի հիւսիսը. Անգլօ-սաքտոնները, գերմանական ցեղի ներկայացուցիչները տէր են Հիւսիսային Ամերիկային, Հնդկաստանին և ովկիանական աշխարհին: Ամերիկայի

հարաւային մասին տէր են սպանիացիք և պորտուգալյացիք։ Ուրեմն այսպիսով եւրոպացիք երկրագնդիս ամեն անկիւնները մուտք են գործել և տէր են դառնում։ Գլխաւորապէս վերոյիշեալ երեք ազգերի ազգեցութիւնն է երեւում ամեն տեղ քաղաքակրթութեան գործում։ Քաղաքակրթութիւնն ամեն ուրեք միակերպ է դառնում։ Եւրոպական բոլոր ազգերը վայելում են նոյն քաղաքակրթութեան միատեսակ բարիքները։ Նրանք ամենքը աշխատանքի միևնոյն գործիքներն ունեն, արդիւնագործութեան միևնոյն եղանակները, փոխադրութեան միևնոյն միջոցները. ամենքն էլ գործարաններ ունին, շղեմեքենաներ, երկաթուղիներ, հեռագիրներ. ամենքը արդիւնագործում են իրանց հանքերը, իրանց հողը։ Դեռ Ամերիկացի և Ովկիանական նոր գաղթական երկիրները երկրագործական երկիրներ են. բարեխառն երկիրները տալիս են ցորեն և անասուն, շոգ երկիրները բամբակ, բրինձ, սուրճ և հացահատիկներ։

Եւրոպացի հարաւային բոմանական երկիրները (Խտալիան, Խսպանիան) մատակարարում են գինի, միրգ. արևելեան սլաւոնական երկիրները հացահատիկներ և ատաղձ։ Արևմաա-հիւսիսային մասը, առաւելապէս գերմանական ժողովուրդները, առանձնապէս արդիւնագործութեամբ են պարապում։ ինքուս տրիան—Անգլիացի, Գերմանիացի, Բելգիացի, Շվեյցարիացի, Ֆրանսիացի հոգին է կազմում ընդհանրապէս։ Այդ երկիրներումն է իսկապէս, որ ամենախիտ ազգաբնակութիւն կայ, որի աճեցողութիւնը շատ արագ է։

Իւրաքանչիւր քառակուսի կիլոմետրի վրայ հաշւում են.

1. Փընէւի կանտոնում	364	բնակի:
2. Բելգիայում.	192	,
3. Անգլիայում.	172	,
4. Հոլլանդիայում.	128	,
5. Գերմանիայում.	84	,
6. Ֆրանսիայում.	71	,

Ազգաբնակութիւնը աճում է իւրաքանչիւր տարի 100⁰ տ-ին

1. Շւէդիայում.	11,5
2. Գերմանիայում.	10
3. Անգլիայում.	9,2

4. Հոլլանդիայում. 9

5. Ֆրանսիայում 2,3 միայն:

17-րդ դարից մինչև այժմ Մեծ-Բրիտանիան 8 միլիոնից բարձրացաւ 35 միլիոն հոգու. Գերմանիան 19 միլիոնից 46 միլիոնի. Ֆրանսիան 19 միլիոնից միայն 37 միլիոնի:

Բոլոր լուսաւորւած երկիրները կապւած են երկաթուղիների ցանցով. ցանցային գծերը տարեցտարի քաջմանում են. Դրանց երկարութիւնը հասնում է աւելի քան 500,000 կիլոմետրի, շողենաւային գծերի երկարութիւնը 100,000-ի, հեռագրալարերի տարածութիւնը 1,300,000-ի, ստորջրային (ծովային) հեռագրալուրերինը—180,000 կիլոմետր-ի: Բացի սրանից մարդկային միտքը և իրը փոխադրւում է այսօր աշխարհի ամեն անկիւնները համաշխարհային փոխադրւում է այսօր աշխարհի ամեն անկիւնները համաշխարհային փոխադրւում է այսօր աշխարհի ամեն անկիւնները և կապիտալները, նրանք անընդհատ հաղորդակցութեան միջոցներով լուսաւորւած աշխարհները փոխանակում են իրանց ապրանքները և կապիտալները, նրանք անընդհատ հաղորդակցութեան մէջ են:

Բոլոր լուսաւորւած երկիրներում կենցաղավարութիւնը, նիստու կացը հետզհեաէ դառնում է միատեսակ: Ամեն տեղ գտնում ենք նոյն մեծ քաղաքները ուղղագիծ փողոցներով. մեծ հրապարակներ քաղաքներում, տրոտուարներ, սալայատակներ, օմնիբուսներ, դաղային, տեղ-տեղ էլեկտրական լուսաւորութիւն, արհեստական ջրանցքով հեռու տեղերից բերւած աղբիւրներ, Բացի սրանից տեսնում ենք նոյն զբաղմունքները, նոյն զւարճութիւնները, նոյն սովորութիւնները, ամեն տեղ կոմֆորտ, թափիր, լրագիր, ժողովատեղեր և այլն:

Սուկայն այս լուսաւորութիւնը չսահմանափակւեց Եւրոպայում. առաջաւոր ազգերը տիրեցին միւս աշխարհներին և սկսեցին քաղաքակրթել այդ երկիրները և տարածել նոյն բարիքները ամենուրեք: Այդպիսով լուսաւորութիւնը դառնում է համաշխարհային:

Մեր նախնիքները և շխատանքներ կատարելու համար բանացնում էին մարդկային և ընտանի կենդանիների ոյժը. արդի քաղաքակրթութիւնը գործում է մեքենաների ոյժով: Զեռքի աշխատանքի ոյժն ու չափը նւազեց, գործարանները պատրաստում են կեանքի

համար բոլոր անհրաժեշտ իրերը մեծ չափով. երկրագործութիւնն անդամ փօխուում է ինպուստիային: Ուրեմն արդիւն ադործացին շըջանումն ենք այժմ որ և տալիս է մարդկացին կեանքի բոլոր ճիւղերին իրան յառուկ կերպարանքը և ձեւերը:

Խոշոր արդիւնագործութիւնը և խոշոր երկրագործութիւնը ստեղծեց պահանջածից աւելի մեծ հարասութիւններ. անդիւնաբերութեան մեծ զարգացումը մի դարուց ի վեր այնպիսի ահագին կապիտալներ ստեղծեց, որ իւրաքանչիւր կապիտալիստ ներկայումս հասարակութեան մէջ դրեթէ անկախ մեծ իշխանի դիրք է վայելում, որի շքեղ կենցաղի և նիւթական մեծ ոյժի առաջ սուեր կարող էին միայն լինել և մոռացւել հին ժամանակների ամենամեծ իշխաններն անդամ:

Արդիւնագործութիւնը այնպիս աժանագին դարձրեց իւր պրոդուկտները, վաճառականութիւնը այնպիս մեծ առատութեամբ փոխադրում է շոք երկիրների բոլոր բերքերը, որ մատչելի են դարձել ամենքին, ժողովուրդի ստորին խաւերին անդամ: Մենք վայելում ենք հազարաւոր այնպիսի բարիքներ, որ մեր նախնիքը երազել անդամ չեին կարող. մեր օրւայ փոքր ի շատէ ապահովւած մարդը աւելի ախորժելի կեանք ունի քան թէ վաղեմի մի մեծ իշխան:

Այս միջազգացին քաղաքակրթութեան հոգին կազմում է գիտութիւնը: Գիտութեան հետեւանքները և թէ ընդհանուրապիս միացը հաղորդուում է մի երկրից միւսը: Մի ժամանակ նոյն իսկ գիտութիւնը ընտրեալների համար ժամանակ անցկացնելու մի արհետ էր համարուում: Այժմ ամենուրեք գիտնականները միւնոյն մեթոդով են գործում: Նրանք գիտութիւնը մշակում են միասին ընդհանուր ոյժերով. նրանք կազմում են միջազգացին գիտնական կոնգրէսները: Այն ժամանակից ի վեր, ինչ որ գիտութիւնը իւր մեթոդները սահմանել և իր հետեւանքները ստուգել է, նա սկսեց գործնական գերևածական առաջարկ արդիւնագործութեան և առևտուրին ուղեցոյց եղաւ, մինչև անգամ ուղղութիւն է տալիս քաղաքականութեան: Գիտութիւնը հետզհետէ ժողովրդականում է մատչելի դառնալով ժողովրդի բոլոր դասակարգերին: Կրթութիւնը դառնում է հաւասարապիս ամենքի համար ձրի. իսկ տարրական դպրոցը պարտադիր մի հիմնարկութիւն է արդէն համարուում:

Այսպէս, ուրեմն, ինչ որ կազմում է լուսաւորւած ժողովուրդ-ների կեանքը՝ արդիւնագործութիւնը, առուտուրը, գիտութիւնը, արհեստները, քաղաքական կեանքը, ամենը բացի լեզվից դարձել է և շարունակում է դառնալ հասարակաց, ընդհանրական և միջազգային։ Սակայն ազգերը, որոնք կապւած են այդքան կապերով, բաժանում են լեզվի, արդիւնագործային մրցումով, հին հակակրութիւններով։ Մրցումը և թէ ազգայնական ատելութիւնը առաջ են բերում քաղաքակրթութեան խաղաղ զարգացման մեծամեծ վեաններ։ Ծնորհիւ այս հանգամանքի ներկայումս երկու միմեանց հակադիր հոսանքներ ենք տեսնում։ Քաղաքակրթութիւնը տոեղծում է մի կողմից մի ջազդային հոսանք, որը մղում է ժողովուրդներին մօտենալու և համերաշխ լինելու միմեանց հետ։ միւս կողմից հին թշնամութիւնները և ատելութիւնները ստեղծում են մի ուրիշ՝ ազգայնական կոչւած հոսանքը, որը մղում է ժողովուրդներին զատւած լինելու և պաշտպանելու միմեանց դէմ։ Այս երկու հոսանքների գոյութեան պատճառով պատերազմը ազգերի մէջ չէ անհետանում։ Մանաւանդ Պրուսիայի յազմութիւնից յետոց ըուլոր Եւրոպական պետութիւնները իրանց պատրաստ են պահում պատերազմի։ Երբէք չտեսնած մշտական զօրքեր են պահում։ Խոտայիան ունի 750,000, Ռուսաստանը 900,000, Ֆրանսիան և Գերմանիան մօտ 500,000։ Ռէզէրւ (պահեստ) սիստէմի շնորհիւ, որը պատերազմի դաշտն է դուրս բերում հարկաւոր դէպօւմ բոլոր պիտան ացուներին, այդ թւերը ուղղակի կարելի էր եռապատկել. այս է, որ անւանում են գլխնած հասարակութեան, ըէժիմն Եւրոպային տարեկան այս զինւածութիւնը նստում է աւելի քան $4\frac{1}{2}$ միլիարդ (4,500 միլիոն)։ Եւրոպան թէև ապրում է խաղաղութեան մէջ, բայց այս զինւած խաղաղութիւնը նոյնքան աւերիչ է, որքան և պատերազմը։ Խաղաղութեան բարեկամները գործում են թէ գրով և թէ գործով այդ աւերիչ չարիքի առաջն առնելու, սպասելով այն երջանիկ օրերին, երբ մշտական զինադադար կլինի ազգերի մէջ։ սակայն այդ երջանիկ օրերը մարդկութիւնը շուտով արդեօք կը տեսնի

Այս ամեն տիսուր հանգամանքները մի ընդհանուր հիմնական բնական պատճառ ունին — գոյութիւն պահպանելու բնազդումը ան-

հատների, դասակարգերի և ազգերի մէջ և հարատութիւնների յետելից ընկնելլը։ Գոյութեան կոիւ—ահա մարդկացին բովանդակ կեանքը որոշող բազմիցս կրկնած խօսքը։ Պէտք չէ սակայն վհատել. մենք շատ և շատ, հազար անգամ աւելի բազդաւոր ենք քան մեր նախնիքները, որոնք նոյնպէս գոյութեան կոիւ են մղել, բայց աւելի յուսահատ կերպով քան թէ մենք։ Կը զայ ժամանակ, ասում է Մորդան, երբ մարդուս բանականութիւնը կարելիին չափ տիրապետող կը հանդիսանայ հարստութեան վրայ... Հարստութեան յետելից ընկնելը մարդկութեան վերջնական կոչումը չէ, եթէ միայն առաջդիմութիւնը կը մնայ ապագայի համար... Ըսդհանրական զարգացման մօտաւոր աստիճանի վրայ ջանք կըդրւի սահմանել բարեխնամ կառավարութիւն, եղանակը ընդհանրակեցութեան մէջ, իրաւանց հաւասարութիւն, ընդհանուր հասարակաց կրթութիւն։ Զարգացման այդ աստիճանը նախապատրաստում են փորձը, բանականութիւնը և գիտութիւնը։
